

36 Եւ ապա հրաժարեալք յեպիսկոպոսացն սրբոց, հանդերձ ազգակա-  
նաւք իւրովք իջանէր ի քաղաքն Սամոստացոց, յորում եւ մեծապատիւ իսկ  
յեպիսկոպոսէն եւ յեկեղեցւոյն մեծարեալ լինէր:

37 Եւ անդ ի նմին քաղաքի գրիչ ոմն հելլենական դպրութիւնն՝ Յռովա-  
նոս անուն գտեալ, որով զամենայն ընտրութիւնս նշանագրոյն՝ զնրբագոյն  
եւ զլայնագոյն, զկարճ եւ զերկայն, առանձինն եւ զկրկնայար միանգամայն  
յարիներ, ի թարգմանութիւն դառնային հանդերձ արամբք երկու աշակեր-  
տաւքն, որոց առաջնոյն Յովհան անուն կոչէին, յեկեղեցական գաւառէն, եւ  
երկրորդին Յովսէփ՝ ի Պաղևական տանէն: 38 Եւ անդ եղեալ սկիզբն թարգ-  
մանելոյ զգիրս յԱռակացն Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ ծանաւթս իմաս-  
տութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով թէ՝ *Ճանաչել զիմաստութիւն եւ  
զհարատ, իմանալ զբանս հանճարոյ՞*: 39 Որ եւ գրեցաւ իսկ ձեռամբ գրչին այ-  
նորիկ, հանդերձ ուսուցանելով զմանկունս գրիչս նմին դպրութեան:

40 Ապա յետ այնորիկ առեալ թուղթ յեպիսկոպոսէ յաղային, եւ հրաժա-  
րեալ ի նոցանէ հանդերձ իւրովքն ամենայն եբէր առ եպիսկոպոսն Ասորոց,  
յորոց նախընկալն եղեւ, առաջի արարեալ նոցա զնշանագիրս աստուածա-  
տուրս, վասն որոյ եւ բազում զովութիւնս իսկ յեպիսկոպոսացն եւ յամենայն  
եկեղեցեացն բարձրանային ի փառս Աստուծոյ, եւ ի մխիթարութիւնք աշ-  
խատելոցն ոչ սակաւ: 41 Յորոց հրաժարեալք այնուհետեւ եւ առեալ թուղթս  
աւետագիրս հանդերձ շնորհատու պարգեւաւք, յանձն եղեալ Զրիստոսի  
շնորհացն ճանապարհորդ լինէր: 42 Եւ այնպէս բազում աւթեւանաւք ան-  
ցեալ աջողութեամբ եւ հոգալից ուրախութեամբ եկեալ հասանէր ի Յայաս-  
տան աշխարհն, ի կողմանս Արարատեան գաւառին, առ սահմանաւք Նոր  
Քաղաքի, ի վեցերորդ ամի Վռամշապուհ արքայի Հայոց Մեծաց:

43 Եւ ոչ այնպէս Մովսէս մեծն զուարթագոյնս ցնծայր յէջս Սինեական  
լերինն. չասեմք եթէ առաւելովքն պակասագոյն քան յԱստուծոյ առեալ եւ  
աստուածագիր հրամանք ի բազումս այրն աստուածատես ի լեռնէն իջա-  
ներ: 44 Իսկ այսմ երանելոյ՝ վասն որոյ ճառեալքս յարդարին, [ոչ] ըստ այնմ  
աւրինակի որ անդր գործեաւ, այլեւ ինքն իւրայովքն լցեալ հոգեւոր ուրա-  
խութեամբ՝ կարծել զյաւժարութիւն ընդունելեացն:

45 Ապա յետ այնպիսի առաւել եւս բարձրագոյն վարդապետութեան՝  
սկսեալ երանելոյն Մեսրոպայ ճառս յաճախագոյնս, դիւրապատումս,  
շնորհագիւտս, բազմադիմիս ի գաւրութենէ եւ ի հիւթոյ գրոց մարգարեակա-  
նաց կարգեալ յարիներալ. լի ամենայն հաւատոցն ճշմարտութեան: